Հաշվետվություն
2019 թվականի ապրիլի 11-13 Ղրղզստանի Հանրապետության մայրաքաղաք Բիշքեկում կայացած ՀԱՊԿ անդամ-պետությունների արտակարգ իրավիճակների գծով համակարգող խորհրդի աշխատանքային խմբի նիստի մասնակցության

Ա. Ներածություն՝

-մասնակիցների կոչումը, անունը, ազգանունը, պաշտոնը՝

Աղվան Սարգսյան, Արտակարգ իրավիճակների քաղաքականության մշակման և միջազգային համագործակցության վարչության միջազգային համագործակցության առաջին բաժնի պետ:

-գործուղման, միջոցառման անցկացման հիմքը՝

Հայաստանի Հանրապետության Վարչապետի 05.04.2018 N361-Ա որոշում:

-միջոցառման անվանումը, վայրը, ժամկետը՝

ՀԱՊԿ անդամ-պետությունների արտակարգ իրավիճակների գծով համակարգող խորհրդի աշխատանքային խմբի նիստ:

Ղրղզստանի Հանրապետության մայրաքաղաք Բիշքեկ:

2019 թվականի ապրիլի 11-13:

Բ. Միջոցառման մասնակիցներ, պետություններ՝

Բելառուսի Հանրապետություն

Հայաստանի Հանրապետություն

Ղազախստանի Հանրապետություն

Ղրղզստանի Հանրապետություն

Ռուսաստանի Դաշնություն

Տաջիկստանի Հանրապետություն

ՀԱՊԿ քարտուղարություն:

Գ. Միջոցառման նպատակը՝

ՀԱՊԿ արտակարգ իրավիճակների համակարգող խորհրդի 11-րդ նիստում հաստատված «Արտակարգ իրավիճակների կանխման և հետևանքների վերացման ոլորտում ՀԱՊԿ անդամ-պետությունների լիազոր մարմինների համագործակցության 2019 թվականի միջոցառումների» պլանով նախատեսված միջոցառումների կատարման մասին:

Դ. Քննարկած թեմաները՝

1. միջազգային այլ կազմակերպությունների հետ համագործակցության հեռանկարները, վերջիններիս ներուժը արտակարգ իրավիճակների դեպքում օգտագործելու համար,
2. «Արտակարգ իրավիճակների կանխարգելման և արձագանքման ոլորտում Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության անդամ-պետությունների լիազորված մարմինների աշխատակարգը» թեմայով շտաբային վարժանքի արդյունքների մասին,
3. «Հավաքական անվտանգության մասին Հավաքական անվտանգության պայմանագրի մասին» ՀԱՊԿ 2011թ դեկտեմբերի 20-ի որոշմամբ հաստատված «Հավաքական անվտանգության մասին Հավաքական անվտանգության պայմանագրի մասին» կանոնակարգում փոփոխություններ և լրացումներ կատարելու համար առաջարկությունների մասին,
4. Բարձր տեխնոլոգիաների անվտանգության միջազգային «Arm-Security-2019» ցուցահանդեսի անցկացման մասին,
5. ՀԱՊԿ անդամ պետությունների լիազոր մարմինների փոխգործակցության մշակման համար զորավարժությունների պլանի և համատեղ գործողությունների իրականացման մասին ՀԱՊԿ 2019թ պլանի իրականացման մասին,
6. ՀԱՊԿ անդամ պետությունների արտակարգ իրավիճակների համակարգող խորհրդի

տասներկուերորդ նիստի օրակարգի նախագծի մասին:
Ե. Քննարկումների արդյունքները և հիմնական մոտեցումները՝ 1. Միջազգային կազմակերպությունների հետ հետագա համագործակցության զարգացման հեռանկարները: 2. «ՀԱՊԿ-անդամ պետությունների աշխատանքները կանխագելման և հետևանքների վերացման բնագավառում ՀԱՊԿ-ի հավաքական անվտանգության խորհրդի 2011թ. դեկտեմբերի 20-ի՝ պետությունների արձագանքման կանոնակարգի, իրագործմանն ուղղված» շտաբային վարժանքների արդյունքները: 3. ՀԱՊԿ արտակարգ իրավիճակների համակարգող խորհրդի 11-րդ նիստում հաստատված <<Արտակարգ իրավիճակների կանխման և հետևանքների վերացման ոլորտում ՀԱՊԿ անդամ-պետությունների լիազոր մարմինների համագործակցության 2019 թվականի միջոցառումների>> պլանի իրագործում: 4. 2019թ Ղրղզստանի Հանրապետությունում անցկացվելիք ՀԱՊԿ օպերատիվ համակարգող ուժերի ղեկավար ստորաբաժանումների հավաք: 5. ՀԱՊԿ արտակարգ իրավիճակների համակարգող խորհրդի 12-րդ նիստի օրակարգ:
Զ. Հետևություններ և առաջարկություններ՝ **- խնդրել՝** 1. Ղրղստանի ԱԻՆ-ին՝ ամփոփել շտաբային վարժանքների արդյունքները և ներկայացնել ՀԱՊԿ արտակարգ իրավիճակների համակարգող խորհրդի 12-րդ նիստին: 2. ՀԱՊԿ քարտուղարությանը բարձր տեխնոլոգիաների անվտանգության միջազգային <<Arm-Security>> ցուցահանդեսը անցկացումը տեղափոխել 2020թ: 3. Ղրղզստանի Հանրապետության Բալիկչի քաղաքում 2019 թ օգոստոսի 8-9 անցկացնել ՀԱՊԿ օպերատիվ արձագանքման ուժերի հրամանատարների հավաքներ: 4. ՀԱՊԿ անդամ պետություններին՝ անհրաժեշտության դեպքում, մինչև 2019 թ սեպտեմբերի 10-ը Ղրղզստանի Հանրապետության ԱԻՆ ներկայացնել ՀԱՊԿ անդամ պետությունների 2020թ արտակարգ իրավիճակների կանխարգելման և հետևանքների վերացման բնագավառում համագործակցության օրակարգի և միջոցառումների ծրագրի վերաբերյալ առաջարկություններ: 5. ՀԱՊԿ ԱԻ ՀԽ հերթական նիստն անցկացնել 2019թ. նոյեմբերի 2-րդ 10-օրյակում:
Է. Անուն, ազգանուն, ամսաթիվ **Աղվան Սարգսյան 15.04.2019**